

ՊՐՈՖ. Ռ. Մ. ՖՐՈՆՇԵՑՆ

ԳՈՒՐԵՑԱ

ՀԱՄԱԴՐԱ ԶԵՐՆԱՐԿ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

616.9
\$-99

30 JUL 2010

ՅԵՐԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

616.9
3-99

ՊՐՈՖ. Ռ. Մ. ՖՐՈՆՇԵՑՅՆ

այ.

ԳՈՆՈՐԵՑԱ

ՀԱՄԱՊՈՏ ԶԵՐՆԱՐԿ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՈՒՍՍՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խուսերենից բարգմանեց
ԲԺ. Արմ. Մելիքյան

7461
06 SEP 2013

ԳՈՆՈՐԵՅԻ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

«Գոնորեյա» բառով բնորոշում են որդանների և հյուսվածքների այն բորբոքումը, վոր առաջ ե գալիս գոնոկոլ կոչվող հատուկ մանրեյից: Ընկնելով տղամարդու միզուկի լորձաթաղանթի վրա, գոնոկոլը վոչ միայն միզուկի բորբոքում ե առաջացնում, այլ և կարող ե տարածվել միզասեռական մյուս որդանների վրա, անմիջապես վարակելով նրանց ևս (տարածման անմիջական ուղիով), ինչպես և կարող ե անցնել միզասեռական որդանների հետ անմիջական կապ չունեցող գործարաններին (ավշային կամ հեմատոլին ուղիով): Որգանիզմի ընդհանուր ռեակցիաները, վոր, ինչպես կանոն, կարելի յե նկատել գոնորեյի բոլոր գեղքերում, թույլ են տալիս գոնորեյան համարելու վոչ վորպես առանձին որդանների տեղական հիվանդություն, այլ վորպես ընդհանուր վարակում՝ տեղական բորբոքման սուր արտահայտված յերեվույթներով:

Գոնորեյա բառը հունարեն և և բառացի նշանակում և սերմանասում (գոնոս—սերմ, թեո—հոսում եմ): Այդ բառը հոմանիշներ ունի. դրանցից ամենազորածականներն են՝ պերելոյ (ռուսերեն), արիպեր (գերմաներեն), բլենորեյա (Փրանսերեն), սուսանակ (հայերեն:—Ա. Մ.): Այդպիսով «գոնորեյա» հասկացողությունը պարունակում ե միայն որդանիզմի հիվանդության ետիւողիան: Բորբոքման տեղը ցույց տալիս պետք ե նշել հիվանդութանը և հիվանդության ետիւողիան: Որինակ՝ յերբ գոնոկոլից միզուկի լորձաթաղանթին ե հիվանդ, պետք ե ասել գոնորեյական միզուկատաղ (urethritis gonorrhoeica), յերբ մակամորձն և հիվանդ—գոնորեյական մակամորձատապ (epididimitis gonorrhoeica) և այլն: Կան ուրիտիտ, եպիգիդիմիտ, վոր առաջանում են վոչ գոնոկոլային, այլ ուրիշ վարակումից:

Գոնոկոլ: Գոնոկոլը դիսուլուկոների խմբին և ոլատկանում և գույզի միկրոբորբանիզմ ե հանդիսանում, վոր բազկացած ե յերկու հատվածից, վորոնցից յուրաքանչյուրը կիսաշրջանի ձև ունի և



4915
39

բաժանված ե մյուսից նեղ ձեղքով: Գոնոկոկի հատվածների մեկը մյուսին դարձրած՝ մակերեսներն աննշան գողավոր ձև ունեն և դրա շնորհիվ յուրաքանչյուր կեսը խիստ նման է սուրճի հատիկին:

Գոնոկոկը շատ արագ ե բաղմանում թե փորձանոթի և թե մարդու որգանիզմի մեջ և բաղմանում է հատվածների բաժանվելու յեղանակով: Վերջինս տեղի յե ունենում գոնոկոկի յերկու հատվածների միջև գտնվող ձեղքին ուղղահայաց գծով: Հստվորում գոնոկոկները միշտ կույտեր են կազմում: Գոնոկոկների յուրաքանչյուր գույքը շրջապատված է լինում առանձին թափանցիկ պատճճով:

Գոնոկոկի ներկաւմը: Գոնոկոկը հեշտ կլանում է անիլինյան հիմնային ներկերը՝ մետիլինի լեզակը, գենցիան-վիոլետը և այլն: Ի գանազանություն այլ դիպուկոկներից՝ գոնոկոկն ըստ զրամի յե գունազուրկ գառնում, և տարբերական զիազնոստիկայի համար միշտ ել այդ մեթոդը պետք է կիրառել: Քսել արտազատումն առարկայական ապակուն և ֆիկուլ՝ բրանելով ապակին գաղի ճրագի վրա, հետո յերեք բուղեյով դնել քսուկը զենցիան միուետի լուծույթի մեջ (գենցիան սպիրտային հազեցած լուծույթի 10,0-ը բաց անել 100,0 կարբույան թթվուտի 2 ½ տոտոկոս լուծույթի մեջ). Գրանից հետո քսուքն առանց լվանալու դնել 3 բուղեյով լյուզոլի լուծույթի մեջ (յոդ 1,0, կալիոնի յոդատ 2,0 և ջուր 300,0), ապա գունազրկել (մինչև հավասարաշափ դորշ դեղնագույն գառնալը) բացարձակ ալկոհոլով և 3 բուղե ներկել կարբուլ գույկինով: Այդպես ներկելուց գոնոկոկները բաց կարմիր գույն են ստանում, մինչդեռ այլ դիպուկոկները, սապոդիքետները—ներկվում են մուգ կապույտ գույնով:

Գոնոկոկի անեցաւմը: Փորձանոթի մեջ գոնոկոկն աճեցնել կարելի յե միայն, յերբ աննդանյութը փորոշ աստիճան թթվություն ունի և պարունակում է նատիվ (բնական, —Ա. Մ.) սպիտ (ասցիտի հեղուկի, մարդու արյան շիճուկի): Գոնոկոկի աճեցման համար ամենապիտանի միջավայրը ասցիտ ագարն և (ասցիտ 1 բաժին և ագար 3 բաժին) և արյան ագարը: Ասցիտ ագարի վրա 37° ջերմության մեջ մել որից հետո գոնոկոկի թափանցիկ ու փոքրիկ գաղութներ են յերեղում, վորոնց մեջ հետազում կիւթափանցիկ կենտրոն է հանդես դալիս: Հետազա վերապատվաստումների գեղքում այդ գաղութները գառնում են ավելի կո-

պիտ, կիսաթափանցիկի, և միախառնվելով կազմում են գորշ գույշ-նի բավական զորեղ փառ:

Գոնոկոկի կուլտուրան չորացման հանդեպ շատ զգայուն և առանց խոնավության շատ շուտ վոչչանում է: Սովորական ախտահանիչն նյութերը, նույնիսկ նրանց ամենաթույլ լուծույթները, շատ շուտ սպանում են նրան: Գոնոկոկի կուլտուրայի ամենալավ զարգացման համար 37—38° ջերմություն և պահանջվում: 37—38° ջերմության դեպքում գոնոկոկի կուլտուրան տերմոստատի մեջ ամիսներով կարող ե մնալ առանց վերապատվաստման, 33° պակաս ջերմության դեպքում գոնոկոկի կուլտուրան շուտ վոչչանում է: Գոնոկոկը մեծ մասամբ այերոր միկրոր և, այսինքն միշտ թթվածնի կարիք ունի, բայց յերբեմն ավելի լավ և աճում համեմատաբար անաերորիոդի պայմաններում, այսինքն այնպիսի պայմաններում, ինչպիսիք զոյություն ունեն միզուկի խորը խավերում: Անաերորիոդ (անողակեցություն) ստանալու ամենահասարակ յեղանակը՝ աճեցնել գոնոկոկը աղարմասաջրի վրա, վորը պետք և ծածկված լինի ստերչած յուղի (վագելինի, հեղուկ պարափինի) շերտով:

Գոնոկոկի տոկսինը: Գոնոկոկներն իսկական տոկսին չեն արտադրում: Կուլտուրաների (հեղուկ կուլտուրաների քամուկների, բակտերիաների եքստրակտների) մեջ հայտաբերված թունավոր նյութերը—ինոգիսինների տիպին են պատկանում, այսինքն զոյունում են բակտերիաների մարմինների (գոնոկոկների) քայլայման ժամանակ: Գոնոկոկի տոկսիկությունը (թունալիությունը) շատ տարբեր և լինում: Միքանի տեսակ կուլտուրաներ սպանում են սպիտակ մկներին ազարի մեկորյա կուլտուրայից 2—3 ողակ ընդերապատակին սրսկելուց հետո, մյուս տեսակ կուլտուրաները միենույն արդյունքն են տալիս 8—10 ողակ սրսկելուց հետո, իսկ յերրորդ տեսակ կուլտուրաները մկներին ամեննելին չեն սպանում:

Գոնոկոկի ավելի թունավոր շտամները մարդու մեջ ավելի ծանր ընթացող գոնորեյա յեն առաջացնում (մակամորձատապ, ձվամանատապ և այլ բարդություններ), իսկ պակաս թունավորները—բարդություններ չեն տալիս:

Բորդե Փանգույի ուսուկցիան: Գոնորեյով հիվանդների արյան շիճուկն ընդունակ չի ազլուտաբինացիայի յենթարկել գոնոկոկի կուլտուրան, բայց գոնոկոկային անտիգենի հետ տալիս և կոմպլեմենտի կազման ուեկցիա—բորդե Ժանդույի սեակցիա: Այդ ուեակցիան, վորպես կանոն, միշտ ել ստացվում և սեռական դեղ-

ձերի ախտահարման բոլոր դեպքերում, զոնորեյական միզուկատապի բոլոր բարդություններում և գրա շնորհիվ կինսիկական մեծ արժեք ունի, վորպես զոնորեյի և այլ բորբոքումների տարերական ախտորոշման մեջոդ: Յերբ զոնոկովը հեռանում և որդանիվմից, զոնոկովային անտիգենի ռեակցիան (Բորգե ժանգույի) բացասական և դառնում:

Փորձնական գումարելու: Գոնոկովը մարդու որգանիվմին հատուկ միջրոր և, այսինքն՝ փորձնական կենդանիներից վոչ մեկին ել չի հաջողվել պատվաստել այն: Փորձի անհաջողությունն ըստ յերեվույթին բացարվում և այլ կենդանիների մարմնի բարձր ներմությամբ, վորը հատուկ և նրանց որգանիվմին:

Կենդանու ընդերքը մտցրած զոնոկովային կուլտուրան տեղական սեականիվ բորբոքման յերեվույթներ և առաջացնում, բայց եկուուգատի մեջ զոնոկով հայտարերել չի հաջողվել: Նույնպես և զոնոկովի պատվաստումը փորձնական կենդանիների աչքի, հեշտացի, միզուկի լորձաթաղանթին փոչ մի անգամ դրական արդյունք չի տվել:

Դունոկովի բիոլոգիան մտարաւ որգանիվմի մեջ: Գլանաձև եպիթելիով պատած լորձաթաղանթների հետ մերձավորությունը զոնոկովի հատկությունն է կազմում: այդ տեսակ լորձաթաղանթները զոնոկովի զարգացման համար ամենահարմար միջավայրն են: Ընկնելով զանաձև եպիթելի վրա՝ զոնոկովը շատ արագ բազմանում և և արդեն 24 ժամից հետո կարելի յե նրան զտնել միջեպիթելային ավշային անցքերի մեջ: Որգանիվմի մեջ մտած զոնոկովը ախտահար զործարանների մեջ թարախային ռեակցիա յե առաջացնում: այդ ռեակցիան արտահայտվում և նրանով, վոր լեյկոցիտներ են յերեվան գալիս միզային ուղիների լորձաթաղանթի արտազատման կամ սեռական զեղձերի զատուցքի մեջ:

Որգանիվմի մեջ յեղած զոնոկովն իր բուլոզիկ հատկություններով տարբերվում և փորձանոթի մեջ յեղած զոնոկովից: Սա ամելի պակաս զգայուն և ջերմության տատանումների հանդեպ: Նույնիսկ յերբ բարձր տաքությունը (40°) յերկար և տեկում (բծավոր տիֆ, թոքերի բորբոքում և այլն), այն ժամանակ, վորպես կանոն, զոնոկովներն որգանիվմի մեջ չեն վոչնչանում, բայց նրանց կենսունակությունը և կենսազործունեցությունը խիստ նրգալում ե, իսկ կինսիկապես այդ արտահայտվում և նրանով, վոր ախտահար զործարաններից թարախը պակասում և շատ անգամ և անհետանում:

Փորձանոթի և որգանիվմի մեջ յեղած գոնոկովների բեռլուգիական հատկությունների տարբերությունը, մարդու որգանիվմի մեջ յեղած զոնոկովի ավելի կայունությունը հանգեց ջերմության՝ բացարվում և զոնոկովների կյանքի տարբեր պայմաններով փորձանոթի և որգանիվմի մեջ, զոնոկովը շրջապատող միջավայրի կազմի զանազանությամբ, ինչպես և որգանների ու հյուսվածքների մեջ զոյլությունը ունեցող անաերորիոզի (անողակերպության:—Ա. Մ.) պայմաններով:

Որգանիվմի մեջ զոնոկովները շատ լավ են դիմադրում հականեխնիչների ներգործությանը: Հականեխնիչների ամենաթօւյլ լուծույթները (հաճախ նույնիսկ հասարակ ջուրը) փորձանոթի մեջ հեշտությամբ քայլայում են զոնոկովներին, մինչդեռ որգանիվմի մեջ այդ բանը տեղի չի ունենում: Դրա պատճառն այն է, փորձաթաղանթի մակերեսին ընկած զոնոկովը 24—36 ժամից հետո գտնվում է եպիթելիալ խավի տակ, խորբում, և հիշյալ խավը պաշտպանում և նրան քիմիկական նյութերի անմիջական ներգործությունից: Պետք և նշել և այն, վոր որգանիվմի մեջ զոնոկովների անընդհատ տեղի ունեցող մասնակի կոտորածից հենց նույն տեղում անզաղար զոնորեյական տոկոսին և գոյանում, իսկ այդ վերջինն ունի շարակցական տարբերի ուժեղ աճ և գրանից հետո հյուսվածքների ոկլերողի յերեվութներ առաջացնելու հատկություն:

Բազմանալով որգանիվմի մեջ՝ զոնոկովները տեղավորվում են վոչ միայն արյան պլազմայի մեջ, այլ և ընդունակ են ներթափանցել լեյկոցիտների մեջ: Յեթե զոնորեյով հիվանդի թարախային արտազատումը մանրազիտական հետազոտության յենթարկենք, նըա մեջ միշտ ել զոնոկովներ կարող ենք գտնել: Պատրաստուկի հյուսվածքաբարանական պատկերը տարբեր և լինում կախված վերցնելու տեխնիկայից: Յեթե հետազոտենք միզուկից ազատ հասող թարախի կաթիլը, մենք կտեսնենք, վոր գոնոկովների ճնշող մեծամասնությունը զանգում և լեյկոցիտների մեջ: իսկ յերբ հետազոտման ենք յենթարկում հյուսվածքներից սեղմելով գուրս հանած թարախի կաթիլը, այն ժամանակ զոնոկովները արտալեյկոցիտային ձևով են զասավորված լինում: Նման գիտազությունների հիման վրա կարելի յե յենթագրել, վոր լեյկոցիտների մեջ զոնոկովների ներթափանցում տեղի յե ունենում վոչ թե հյուսվածքների խորքում, այլ վարակված լորձաթաղանթների մակերեսին, ուր ավշի հոսանքով դուրս են մղվում զոնոկով:

Ները լեյկոցիտների հետ միասին: Լեյկոցիտներն են այդունք կլանում գոնոկիներին,՝ թէ զոնոկոկներն իրենք են ներս մանում լեյկոցիտների մեջ, այդ խնդիրը մինչև որս ել գեռ վիճելի յե:

Լեյկոցիտների մեջ գոնոկիներն ինքնարուծման չեն յենթարկվում, ընդհակառակը լեյկոցիտների մեջ մտած զոնոկոկները վուոշ ժամանակից հետո քայլայում են նրանց. մանրաղիտականորեն այդ հայտարերվում են հետեւյալում: Լեյկոցիտը պատովում և գոնոկոկները պրոտոպլազմայից թափվում են դուրս: Լեյկոցիտների պրոտոպլազմայի մեջ գտնվող զոնոկոկները շարունակում են բազմանալ նրա մեջ, բաժան-բաժան են լինում և թվով շատանում:

Վարակման լեզանակը: Իրրե կանոն վարակումը տեղի յեւնենում սեռական ուղիով: Անժխտելի յեւ և արտասեռական ուղիով վարակման հնարավորությունը, վորը սովորաբար տեղի յեւնենում մանկական հասակում: այդ տեսակ վարակմանը նպաստում են ընդհանուր անկողինը, ընդհանուր վաննաները, ինչպես և սեռական որգանների լվացումների համար զործադրվող թասերն ու սպունգները և այլն:

Բացառիկ գեղքերում վարակումը տեղի յեւ ունենում ուղղաձիգ աղիքի կամ բերանի միջցով, յերբ անընական սեռական մերձեցումներ են ունենում: Գրականության մեջ նկարագրված են գեղքեր, յերբ վարակումը տեղի յեւնեցել հասարակական պետքարաններից ոգտվելու ժամանակ (կանայք), ինչպես և մի այլ անձի վարակված սպիտակեղենը հագնելուց:

Մի շարք հատուկ մոմենտներ նպաստում են վարակի ներս մտնելուն: Այդ տեսակ նպաստող հանգամանք և յերկարատեղ և կրկնակի սեռական զործողությունը: Վորքան սեռական զործողությունը յերկար և տեռում, այնքան առողջ լորձաթաղանթների յերկար ժամանակ են շփում ունենում հիվանդ լորձաթաղանթների հետ և այնքան ավելի զյուրին և զանոնում վարակման հնարավորությունը: Ապա, բուռն կերպով կատարած սեռական զործողությունը սեռական զեղձերի ուժեղ և ակտիվ կծկումներ և առաջացնում և հեշտացնում զեղձերի մեջ բուռն դրած վարակի ժայթքումը: Դաշտանի ժամանակ կատարած սեռական զործողությունը նույնպես կարող և հնարավոր դարձնել վարակումը, զործականությունը և այդ ժամանակ զոնոկոկների կենսադործունեյաւթյունն ուժեղությունը ե:

Ի մաս թիս ես: Գոնորեյան շատ տարածված հիվանդություն ե: Գոնորեյով հիվանդ տղամարդկանց և կանանց տոկոսային հարաբերությունը մոտավորապես միատեսակ է: Ամեն հասակում, թէ ծերության և թէ մանկական, կարելի յեւ վարակվել գոնորեյով: Նկարագրված են դեպքեր, յերբ նորածինները վարակվել են ծնվելու ժամանակից: Հարյուր տարեկան ծերունիների վարակման գեպքեր ել են նկարագրված:

Գոնորեյան ժառանգաբար չի անցնում: Գոնորեյով կարելի յեւ մի քանի անդամ հիվանդանալ և սովորաբար, բայց վոչ վորպես կանոն, յուրաքանչյուր հաջորդ գոնորեյան նախորդից ավելի թեթև և անցնում: Մի անդամ ունեցած գոնորեյան նոր վարակումից չի ապահովում, այսինքն ձեռքբարով իմունիտեատ առաջ չի գալիս: Բնածին իմունիտեատ նույնպես չկա: Յեթե պատահում են առանձին անհատներ, վորոնք չեն վարակվել հիվանդության իսկական ոջախից, դա բացարձում և սոսկ պատահականությամբ. վարակումից խուսափածները հետագայում շատ անդամ հիվանդանում են միենույն աղբյուրից:

Կրկնում և կրկնավարակում (ռեցիլիվ և ռեինֆեկցիա): Մի քանի հեղինակներ յենթագրում են, վոր գոնորեյով մի անգամ հիվանդացած անձը նոր վարակմանն ավելի ընկալունակ և զառնում, Յերկու մոմենտ պետք և լավ ջոկել՝ կրկնավարակում և կրկնում: Առաջներում գոնորեյան անրուժելի հիվանդություն եր համարվում: Մի իմաստալից դարձվածք կար, թէ յուրաքանչյուր գոնորեյով կարելի յեւ առողջանալ, բացի առաջինից:

Ներկայումս կլինիկական յերկարատեատ ու բազմաթիվ զիտոզություններով ապացուցված ե, վոր գոնորեյան բուժելի յեւ, այսինքն՝ հնարավոր ե, վոր զոնոկոկներն որպանիզմից բուլորումին անհետանան: «Անբուժելի» գոնորեյի գեղքերը պրակտիկայում յեղակի յենթատահում: Անբուժելի գոնորեյի գեղքերի քանակը յուրաքանչյուր բժշկի պրակտիկ գործունեյության մեջ պակասում ե, զուզքնթաց նրա փորձառության ավելացմանը: Սակայն անկասկած ե, վոր առանձին զեղձերում նկատվում են հիվանդության ռեկրկնումներ» (ռեցիլիվներ). դրանց պատճառը թմրած վարակի բոնկումն ե, վորը բուռն և գրած լինում այն որգաններում, վորոնցից արտազատման հոսումը զժվարացած և լինում [սերմնապարկեր, առաջակեդա-պեղճ—(պրոստատա)՝ ձվամաններ]:

Յերեկմն զործնականնորեն կարենու և լինում իմանալ՝ լինչ և այդ, կրկնում, թէ կրկնավարակում: Այդ հարցը լուծելու համար

պետք և մանրակրկիտ կերպով ուսումնասիրել անամնեսից սահացած ավյանները, վճռոնք անցած գոնորեյին են վերաբերում և հիվանդին առերեսման կանչել վարակման աղբյուրի հետ՝ կոնֆրանտացիանել, այսինքն՝ հետազոտման յենթարկել վարակողին։ Դա պետք և անել նաև այն գեպքերում, յերբ վարակվածը թարմ վարակումը կտրականապես ժխտում է, հայտարարելով, որինակ, զոր և սեռական մերձեցում ունեցած կնոջ ամուսինը յերկարժամանակ ապրում է իր կնոջ հետ և բոլորպին առողջ է։

Գոյություն ունի զոնորեյի այսպես կոչված «ընտանեկան» տեսակը, տպամարդը, զեռ զոնորեյից չբժկված, վարակում և իր կնոջը բռուժման ազգեցությունից թուլացած զոնոկոկների շատմավ։ Թուլացած վարակը կնոջ վրա պակաս նկատելի զոնորեյի թույլ պատկերն և առաջիւ Յերկու ամուսինները, սեռական հարաբերության ժամանակ միմյանց հետ զոնոկոկների փոխանակություն կատարելով՝ ընտելանում են իրենց սրգանիզմի մեջ գտնված բակտերիաների ցեղին և նրանց լորձաթաղանթները կարծես հատուկ իմունիտետ են ստանում ճանդեպ զոնոկոկների այդ ցեղի Յեթե նման կենակցության մեջ յերբորդ անձնավորություն և մեջ մըանում, այն ժամանակ այս վերջինը սուր զոնորեյա յե ստանում, վարովինեան նոր հոգի մեջ ընկած զոնոկոկը շատ ակտիվ կերպով և արտահայտում իր կենսագործունեյությունը։

Ինկուբացիա : Կլինիկական դիտողությունները ցույց են տվել, զոր զոնորեյի ինկուբացիոն շրջանը կարող և տատանվել 1—40 օրվա միջին ինկուբացիայի տեսլողությունը կախում ունի շատ գանգան պատճառներից՝ զոնոկոկների կուլտուրայի թույնալիությունից, վարակի անցնելուց վոչ թե անմիջապես միրուկին, այլ հարամիզուկային անցքին, զորտեղից և հետո զանգազրեն վարակվում և միզուկի լորձաթաղանթը և այլն։ Այդ բանում զորոշ գեր են խաղում նաև սրգանիզմի տեղական և ընդհանուր բնույթ կրող ժառանգական առանձնահատկությունները։

Պետք և կանոն համարել, զոր ինկուբացիայի շրջանը կիբութեազես 3—4 օր և տևում։ Սակայն պաթալոգուանատոմիական տեսակետից ինկուբացիոն շրջանը շատ կարճ և լինում, Միզուկի լորձաթաղանթին զոնոկոկի կուլտուրայի պատվաստման փորձերը ցույց են տվել, զոր վարակումից հենց 12 ժամ հետո կարելի յե հյուսվածքների հիպերեմյա և սերող արտազատում նկատել, 18 ժամից հետո՝ լորձաթաղանթային արտազատում զոնոկոկների ամելի կամ պակաս քանակով, իսկ 24 ժամից հետո արգեն զո-

նորեյի սուր միզուկատապի հյուսվածքաբանական պարզ պատկերը։ Վարակի տարածման ուղիները: Մինչեւ վերջերս ել վիճաբանություն աեղի ուներ, արդյոք զոնորեյան տեղական հիվանդություններ ու մետաստազներ տալիս, թե՞ նա նենց սկզբից ամբողջ որդանիզմի վարակիչ հիվանդություններ են ներկայումս, հիմնվելով բազմաթիվ սերուղովիկ հետազոտությունների վրա, մենք վորոշակի կարող ենք պնդել, զոր զոնորեյան ընդհանուր վարակիչ հիվանդություններ են։ Այդ թեորիայի անտարակիույս ապացույցն են նաև միշտ կլինիկական բազմաթիվ զիտոզությունները, ինչպես և հիվանդի կենդանության ժամանակ նրա արյան մեջ, ներսութենու (ենդոկարդի) և առաջնային ոջախից հետո որգանների մեջ զոնոկոկներ գտնելու միշտ զարք գեպքերը։ Հստ յերեվույթին, զոնորեյով վարակման բոլոր զեպքերում, առանց բացառության, զոնոկոկն արյան ընդհանուր հոսանքի մեջ և մտնում (զոնոկոկային բակտերիեմիա), միայն շատ քիչ հիվանդների մեջ և իսկական սեպսիո (զոնոկոկցիմիա) առաջ բերում։ Մեծ մասամբ արյան հունը զոնոկոկների համար ամրող որգանիզմով տարածվելու սօսկ ճանապարհ և ծառայում։ Ընդվորում զոնոկոկները սովորաբար արյան միջից արագ անհետանում են. զրանով և բացատրվում այն հանգամանքը, զոր արյան սերուղովիկ զրական սեակցիան թվով ավելի շատ է, քան արյան մեջ զոնոկոկի հայտաբերումը ցանքի միջոցով։ Արյան ընդհանուր հունի մեջ զոնոկոկների անցնելուն շատ և նպաստում նրանց հատուկ ընդունակությունը՝ արագությամբ ներթափանցել հյուսվածքների խոր խավերի մեջ, զորտեղից յերակային արյան հոսանքով զուրս են բերվում և տարածվում ամրող որգանիզմի մեջ։ Արյան շիճուկի պաշտպանողական սեակցիայի թուլանալու զեպքում զոնոկոկները կարող են զարգանալ նրանց համար շատ հարմար միջավայր ներկայացնող արյան մեջ, և զոնորեյի ընթացքում կարելի յե միշտ զարք բարդություններ նկատել առաջնային ոջախից հետո սրգաններում։ Իսկ յերբ սրգանիզմի պաշտպանողական սեակցիան բավարար և, զոնոկոկների արյան մեջ զոչնանում են, քայլայվում, տօսկիններ զոյացնելով. այդ ժամանակ նկատվում են սրգանիզմի միայն ընդհանուր թունավորման յերեվույթներ, առանց մետաստազների։

Ընդհանուր սրգանիզմի զոնորեյով հիվանդանալու կլինիկական ախտանիշը — շերմության բարձրանալն ել լինում, զորը յերբեմն լինում եւ ուժեղ և տատանումներով, իսկ յերբեմն ել աննշան և հարակցվում է ընդհանուր թուլությամբ ու ջարդվածությամբ։ Այդ յե-

ոեվույթները շատ շուտ անցնում են կամ վերջանում են մետաստաղներով մեկ կամ մի անդամից մի քանի որգաններում։ Գոնոկոկներն արյան ընդհանուր հոսանքի մեջ կարող են ընկնել վարակի յուրաքանչյուր ոչախից։ Բայց կան վրոշ որգաններ, վորոնցից հիվանդության տարածումը շատ հեշտ է շնորհիվ նրանց առատ անոթավարման։ Այդ տեսակ որգաններին են պատկանում աղամարդկանց՝ միզուկի հետեւի մասը և սերմապարկերը, իսկ կանանց՝ արգանդի հավելուկները։ Մարդու մարմնի մեջ չկա մի որգան, վորի մեջ գոնոկոկները չկարողանան անցնել արյունատար ուղիներով և բորբոքային փոփոխություններ առաջացնել (հողեր, վասկորներ, ավշային առանձին գեղձեր, ներսրտենի [ենդոկարդ], ներիվային ճյուղեր, աչքի ծիածան և այլն)։ Վարակի տառածումը հիվանդության առաջնային ոջախից կարող է տեղի ունենալ բացի արյունատար ուղուց և ավշային ճանապարհով կամ կոնտինուիտատ (շարունակման։—Ա. Մ.) յեղանակով։

Գոնորեյան և լորձաթղանքները։ Գոնորեյայի պրոցեսի հիմնական որենքն այն ե, վոր գոնոկոկն ընտրական մերձավորություն և հանդես բերում լրճաթաղանթների, առանձնապես գլանաձեն եպիթելի հետ։ Ուստի և ամենից հաճախ գոնորեյան հիվանդությամբ տկարանում են այն որգանները, վորոնք պատաժ են այդպիսի եպիթելով (միզուկ, արգանդի զղիկ, աչքի շաղկապենի)։ Ընկնելով գլանաձեն եպիթելի վրա՝ գոնոկոկը տարածվում է վոչ միայն նրա մակերեսով, այլ և եպիթելյալ բջիջների միջով ու հեշտ կերպով ներթափանցում է յենթեպիթելյալ խավի մեջ, յենթեպիթելյալ շարակցական բջջանքի մեջ ու այդպիսով իր ներկայությամբ և իր քայլայման արդյունքներով (կենդուոկիններով) առաջացնում է լրճաթաղանթի բորբոքային ռեակցիա։ Բագմաշերտանի տափակ եպիթելը վորոշ արգելք և հանդիսանում հյուսվածքների խորքը գոնոկոկի մտնելու համար։ այդ եպիթելի մակերեսի վրա գոնոկոկներն աճում են վորպես սապրոֆիտներ, առանց բորբոքային յերեխույթներ առաջացնելու, մինչև զանաձև եպիթելի հետ անմիջական շփում ունենալը։

Վորպեսպի գոնոկոկը կարողանա լի ծավալով արտահայտել իր ներգործությունը, անհրաժեշտ պայմանն այն ե, վոր լրճաթաղանթը մի վորեն կերպ կասավի և գոնոկոկի համար որգանի խորքն անցնելու մուտք բացվի, թող լինի այդ կասառումը վորեն գործիքից, գեղերից կամ հիվանդի վոչ խելացի վարմունքից։ «Գոնորեյի բարդություններով» հիվանդների մեծամասնության անամեսից, այ-

ոինքն այնպիսի հիվանդների անամեսից, վորոնց վոչ միայն միզուկն և ներգրավված բորբոքման մեջ, այլ և ուրիշ որգանները, համարյա միշտ ել կարելի յե հայտարերել (վորպես ամենամերձակա ետիոլոգիկ մոմենտ) թվարկած զործոններից մեկն ու մեկը։

Գոնոկոկի առաջ բերած բորբոքման ազդեցությամբ գլանաձեն եպիթելը քայլայվում է և պոկ գալիս։ Ապաքինման պրոցեսին հարակցում ե եպիթելի մետապլազմիան (գլանաձեն եպիթելը փոխարինվում է բազմաշերտանի տափակ եպիթելով)։ Այդ մետապլազմային մեծ և կարենոր զեր և վերաբրվում առողջացման պրցեսում։ Ընկնելով նոր գոյացած տափակ եպիթելի մակերեսի վրա, գոնոկոկներն իրենց հետագա զարգացման համար ընական արգելքի յեն հանդիպում, մյուս կողմից ել հյուսվածքների խորքը մտած գոնոկոկները ծածկված լինելով նոր գոյացած եպիթելի խավով, իրենց զարգացման համար այնուեղ լավ պայմաններ են ձարում և արագին միջավայրից մեկուսացված լինելով՝ անարգել կերպով կատարում են իրենց քայլայիշ աշխատանքը։ Մի առժամանակ անցնելուց հետո, վորի տեսողությունը զուտ անհատական է լինում, կարելի յե տեսնել փոխարինած տափակ եպիթելի անհետացումը և լրճաթաղանթի գլանաձեն եպիթելի լինակատար կամ մասնակի վերասերումը։

Անձնական պրոֆիլակտիկայի յերկու մեթոդ զոյւթյուն ունի. առաջինը՝ մեկաւսացնել տղամարդու սեռական որգանի լրճաթաղանթը կնոջ վարակված որգաններից և յերկրորդը՝ վոչնչացնել լրճաթաղանթի վրա արգեն ընկած վարակը։ Առաջին ձեն այն ե, վոր սեռական գործողությունից առաջ սեռական անդամին կոնդում են հազցնում։ Կոնդումի կիրառումն ապահովում է տղամարդուն գոնոկոկի վարակվելուց, ինարկե միայն այն պայմանով, վոր սեռական գործողության ժամանակ կոնդումն անվթար վիճակում մնա (չվնասվի)։

Պրոֆիլակտիկայի յերկրորդ միջոցի նկատմամբ շատ և տարածված հետեւյալ խորհուրդը։ Սեռական գործողությունից ան-

միջապնա հետո միզել և լվանալ արտաքին սեռական որդանները տաք ջրով ու սալոնով, փորով կարելի յե հեռացնել լորձաթաղանթի վրա ընկած գոնոկոկները: Միզելուց հետո պետք է միզուկի մեջ որը բարսկել արծաթի նիտրատի 10% լուծույթից կամ պըոտարգովի 50% լուծույթից $5-10$ կաթիլ և մոտավորապես 5 րոպե գեղը պահել միզուկի մեջ: Փորձով ապացուցված ե, վոր կանխման նման մեթոդը զրական հետեւվանք ե տալիս սեռական գործողությունից նույնիսկ 5 ժամ հետո, իվիճակի յե կոտորել միզուկի մեջ ընկած գոնոկոկները և այդպիսով կանխել հիվանդության զարգանալը: Այս մեթոդը բավական տարածված ե և գեղագործական արդյունաբերությունը վաճառքի յե հանել զրաքնի գեղիքները, վորոնց հետ միասին և արծաթի սպիտացին զանազան պրեպարատների ու զիթցերինի խառնուրդ: Գերմանական նավատորմի յուրաքանչյուր նավատի ավելի իշխելիս ստանում ե մի քանի տուփ այդ գեղերից և հետև ել գործածելու յեղանակի մասին զրաք պատվերները, փորը նավատիների մեջ գոնորեյով հիվանդների թիվը զգալի չտփ պակսեցրել ե:

Անզիւդական բանակում կանխման համար ընդունված ձևի համաձայն՝ միզուկի առջևի մասը լվանում են պերմանդանատ կալիումի $1:5000$ լուծույթով: Այդ ձեն ուշադրության արժանի յե նրանով, վոր չի գրգռում լորձաթաղանթը, անթիվ անզամ կարելի յե կրկնել, մինչդեռ արծաթի պատրաստուկների վերաբերյալ այդ գմվար ե ասել: Այդ մեթոդը յերկու սկզբունքի վրա յե հիմնը վարակը հեղուկի հոսանքով մեքնական ձեռվ հեռացնել և գոնոկոկների զարգացման համար անրարենպաստ պայմաններ ստեղծել: Սակայն առաջին ձեն առորյա իրականության մեջ ավելի հարմար ե և հեշտ կիրառելի:

Դանուբեյի բաւժելի խուրյունը: Գոնորեյի բուժելիությունը պետք է հասկանալ՝ գոնոկոկների անհետացումն ախտահար օրգաններից: Սակայն թարախի անհետացումը բավական չե, վոր հիվանդին գոնորեյից առողջացած համարենք: Բուժեան աղդգաւթյամբ սովորաբար արտազատումն ավելի շուտ ե անհետանումքան գոնոկոկները: Բավական և հիվանդը խանգարի գիետը, կա սեռական հարաբերություն ունենա, վոր դոնոկոկներն ոկտեն ուժեղ զարգանալ և թարախումն առաջվա սիս ուժեղ բռնկիք: Այն հարցը, թե գոնոկոկներն արզուք կայուն կերպով են անհետացել, հիվանդին արզուք մերջնականապես առողջացած կարմա ենք հո-

մարել և պետք է նա զադարեցնի բուժումը, — շատ դժվար լուծելի խնդիր ե:

Գոնորեյի բուժվածության միակ ճիշտ չափանիշը մեզի և սեռական գեղձերի արտադրուկի մանրադիտական և մանրեւբանական անալիզն ե: Սակայն անալիզն այն ժամանակ արժեք ունի, յերբ կատարում են սիստեմատիկաբար և հիվանդի բազմակողմանի, մեթոդիկ, կլինիկական հետազոտության կապակցությամբ: յերբ այդ անալիզը քննության ե առնվում, վորպես որյեկտիվ հետազոտության տվյալների, ինչպես և հիվանդի սուրյեկտիվ զգացումների ու անամնեսի արժեքափորման զիսավոր ողակներից մեկը: Անհրաժեշտ ե միզուկի լորձաթաղանթի արհետական քիմիական և մեքնական զգացումներից հետո մանրեւբանական կրկնակի հետազոտության յենթարկել մեզն ու սեռական գեղձերի զատուցքը, յեթե նման գեղքում վնչ միզուկում, վնչ գեղձերի մեջ բարսքման ոջախներ չեն գտնվի, իսկ անալիզներում վոչ միայն գոնոկոկներ, այլ և լեյկոցիտներ չեն գտնվի, կամ լեյկոցիտները միավոր քանակով կլինեն, այն ժամանակ պետք է հիվանդին առողջացած համարել: Յերեկեն «առողջ ե» դիագնոզը կարելի յե ընդունել նույնիսկ այն ժամանակ, յերբ առավոտյան մեզի առաջին բաժնի մեջ նույնիսկ լորձաթաղանթային բնույթի տոանձին թելիկներ են լինում: Նման գեղքում դիագնոզը պետք և դնել միայն հիվանդին յերկար ժամանակ ստուգիչ քննության յենթարկելուց հետո և այդ ժամանակամիջոցում հիվանդը չպետք է բժշկի, այլ պետք և սովորական կյանք վարի:

Պայետք և մոռանալ, վոր անցյալում գոնորեյով հիվանդացածների մեջ լեյկոցիտներ և թելիկներ միշտ կարող են լինել և այդ բացարձում և նրանով, վոր անկարելի յե վերականդնել լորձաթաղանթների անատոմիկ վողջությունը: Առանձնապես գոնորեյի այն գեղքերում, վորոնք բարդացել են հավելյալ գեղձերի հիվանդությամբ, յերեքը հնարավոր չի լինում մեզի միջից լեյկոցիտների լիովին անհետացումը:

2

ԳՈՆՈՐԵՅԱԿԱՆ ՍՈՒՐ ՄԻԶՈՒԿԱՏԱՎ

Էնթացքն ու պարուզիական տնտեսմիտն: Գոնորեյական միզուկատապի կլինիկան յերկու փուլ ունի—սուր և խրոնիկ:

Գոնորեյական սուր միզուկատապի հիմնական ախտանիշն ե-

գոնոկոկներ պարունակով թարախային արտահոսումը միզուկից: Դոնորեյական միզուկատապի ինկրոբային շրջանը միշին հաշվով 3—5 ար ե: Այդ ժամանակամիջոցում գոնոկոկները մակարուծում են միզուկի գլանաձև եպիթելի վրա. բազմանալով այստեղ, գոնոկոկներն աստիճանաբար ներթափանցում են լորձաթաղանթի վերին խալերի տակ. որդանիզմը հակաղղեցություն և ցույց տալիս նրանով, զոր միզուկի անոթները լայնանում են և լայնացած անոթներից լեյկոցիտներ են զուրս գալիս: Եպիթելի բջիջներն այլամերլում են, նրանց միջին յեղած փոխադարձ կապը, ինչպես և նրանց սնունդը խանգարվում են: Պլոկվելով ահազին կտորներով այդ բջիջները մերկացնում են լորձաթաղանթի ավելի խոր խափերը: Միզուկի մեջ գոնոկոկի մտնելուց 36 ժամ հետո միզուկի հաստույքը լինում և մանր բջջային քիչ թի շատ խոր ներսփռման վիճակում: Հիվանդության սկզբում հիվանդի սուրյեկտիվ զգացումները կայանում են նրանում, զոր հիվանդը միզուկի մեջ ջերմ և այրոյ և զգում, այդ զգացումը միզելիս ավելի ուժեղանում է: Միզուկի արտաքին բացվածքը կպչում և և մեղի մեջ թարախային առանձին թելիկներ են յերեսում: Յեթե հիվանդության այդ շրջանում միզախողովակի արտազատումից քսուկ պատրաստմաք և մանրաղիտակով հետազոտենք, կտեսնենք պոկ յեկող եպիթելի մեծ քանակով ճարպասերված բջիջներ, փոքր քանակով լեյկոցիտներ և գոնոկոկներ:

Տարածվելով մակերեսով և գեղի խորը՝ գոնոկոկներն ուժեղացնում են բորբոքային պրոցեսը, յերեան և գալիս զեղնահանչալուն գույնի թարախային առատ արտազատում, միզուկի արտաքին բացվածքն այտում ե, լեյկոցիտներն այնպես են ներծծում լորձային ու յենթալորձային հյուսվածքը, զոր միզուկը շոշափելիս հաստ քղիկի տեսք և ունենում: Վարակումից 72 ժամ հետո գոնոկոկներին արդեն կարելի յե հայտարերել յենթալորձային հյուսվածքի մեջ: Հիվանդության այդ շրջանում համարատասխան արտազատումից վերցրած մանրաղիտական պատրաստուկի մեջ կարելի յե հայտարերել զդալի չափով լեյկոցիտներ (լիմֆոցիտներ և բազմակորիզավորներ), սակայ քանակով ճարպասերված եպիթելի բջիջներ և գոնոկոկներ:

Հիվանդի սուրյեկտիվ զգացումները զնալով ավելանում են: Արյան ուժեղ առեսման պատճառով առնանդամը կիսականգ դրույթյան մեջ և լինում և, քանի զոր բորբոքումը միմիայն միզուկն և զրավել, առնանդամը կորանում է, զորավոր կապը կամ առաջանալու մեջ:

Կարձրած(chorda venerea): Երեկոցիաներն առանձնապես ուժեղ են լինում զիշերները, խիստ ցավում են, հիվանդները գանգավում են, զոր միզուկի ցավեր ու ծակոցներ են զգում: Ցավերն ու ծակոցները բացատրվում են՝ միզուկի բորբոքված լորձաթաղանթի տարածումով հոսող մեղի պատճառով: Յերբ բորբոքումը շատ ուժեղ և լինում, միզուկից թարախի հետ միասին կարող ե արյուն արտազրվել:

Հետազայտում բորբոքման են ներգրավվում նաև կիտրեյի գեղձերն ու Մորգանյի ծոցերը. Նրանց հեղիթելը փխրուն և զառնում, պոկ և գալիս և փոխարինվում է յերիտասարգ հատճակաղմ (զրանուլացիոն) հյուսվածքով, վորը հետազայտում կամ տարածծվում է, կամ կազմելով սպի՛ սեղմում և կիտրեյան գեղձի արտածորանը և գեղձի խոռոչում առաջացնում սահմանափակ և զոցված թարախալում հարամիզանցքային (պարաւըթարալ) թարախակույտ:

Հիվանդության յերրորդ շաբաթվա վերջին բորբոքումը սովորաբար սկսում և հանդարավել, ցավի յերեվույթները մեզմանում են, արտազրուկը պակասում է: Մանր բջիջային ներսփռմանը հետզհետե տարածծվում է, եպիթելը վերասերվում է, բայց սովորաբար նա փխրակերպվում ե՝ զգանաձե եպիթելը փխրարինվում և տափակով. այդ ժամանակամիջոցում կատարած մանրաղիտակային հետազոտությունը արտազատման մեջ հայտարերում և տափակ եպիթելի բջիջներ և միզալոր լեյկոցիտներ (եռինասերներ): Գոնոկոկները կամ շատ քիչ են լինում, կամ ամենեվին չեն հայտարերիվում: Մինույն ժամանակ կարելի յե հայտարերել զդալի քանակով զավրոփիտ մանրեներ:

Կյալես և լինում սուր միզուկատապի սովորական ընթացքը, զորը տեսում և միջին հաշվով 6—7 շաբաթ: Յերեեմն գոնոկոկները շատ համառ կերպով են մնում լորձաթաղանթի տակ, գեղձերի մեջ, ծոցերում և անհետանում են միայն շատ յերկար ժամանակով հետո՝ թողնելով իրենցից հետո բորբոքային և մանրարջիջային ներսփռման: Այդպիսով սուր բորբոքումը կարող է փոխվել խրոնիկ ձևի:

Հետեւ միզուկատապի: Սովորաբար գոնորեյան ախտահարում և միզուկի միայն տաշիկ մասը: Այս վերջինի միզանային սեղմանը պատճեց և հանդիտանում միզանցքի հետեւը գոնոկոկների տարածվելու գեմ: Սակայն շատ հաճախ հետեւ միզուկի լորձաթաղանթն ել և ներգրավվում բորբոքման մեջ: Հիվանդության տարածումը միզուկի առջերի մասից հետեւ մասին սովորաբար



տեղի յեւ ունենում հիվանդության 3—4 շաբաթվա վերջին, բայց գեղքեր են նկարազրված, յերբ վարակն անցել է միզուկի հետեւի մասը նույնիսկ յերկրորդ շաբաթվա վերջին. այդ հանգամանքը կախում ունի վարակի թունալիությունից և հիվանդի վարքից: Միզուկի հետեւի մասի բորբոքման ժամանակ հիվանդի զգացումներն ուժեղանում են և ձևափոխվում: Յերբ հիվանդը միայն երեկցիայի ժամանակ է ցավ զգում, իսկ այրոցը՝ միայն միզելիս, կնշանակի նրա միզուկի առջեկ մասն և բորբոքված, իսկ յերբ այդ ախտանիշներին ավելանում է հաճախակի միզելու ցանկությունը և ցավը՝ միզելու վերջում, կնշանակի հիվանդությունն անցել է հետեւի մասը: Բորբոքման տեղափակման ախտորոշումը միզուկի առջեկ, թե առջեւ հետեւի մասում կարելի յեւ զնել այսպես կոչվող յերկածակային փորձի ոգնությամբ: Յերբ բորբոքումը միզուկի միայն առջեկ մասումն է, մեզի միայն առաջին բաժինն է պղտոր լինում, իսկ յերկրորդը պարզ է լինում: Յերբ ամբողջ միզուկն է հիվանդ, յետեւի մասում կուտակվող թարախը հաղթաբում է հետեւի սեղմանի դիմաքրությունը, անցնում է միզափամփուշը և խառնվում մեզին, ուստի և յերկու բաժակի մեջ ել մեզը պղտոր է լինում: Սակայն միշտ ել հնարավոր չի լինում գոնորեյական միզուկատապի տեղական ախտորոշումը զնել միայն մեզի հերկու բաժնի հասարակ աչքով նայելու հիման վրա: Յերբ միզուկի հետեւի մասի բորբոքումն աննշան է, թարախը միզափամփուշը չի անցնում և մեզի յերկրորդ բաժինը կարող է պարզ լինել. ախտորոշման համար պետք է դիմել քննության ավելի ստույգ մեթոդի (ուրեաբուկոպիա):

Գոնորեյին հարակից ընդհանուր յերեվույթներն են՝ ջերմության բարձրացումը, վատ ախտօժակը, ջերմային դրությունը: Զերմության բարձրացումը բացատրվում է գոնոկոկների ուժեղ քայլայումով, յերբ զայանում են տոկսիններ, վորոնք չեն կարողանում լեյկոցիտների հոսանքով դուրս յելնել, այլ ծծմում են արյան մեջ:

Գոնորեյական միզուկատապի ընթացքը հաճախ շեղում է հիվանդության նկարազրած ախտիկ զարգացման ձևից: Այդ հաճախ պատահում է այն ժամանակ, յերբ հիվանդության ընթացքը թուումած և լինում և սուրյեկտիվ յերեվույթները կամ շատ պատ են լինում կամ բոլորովին բացակայում են: Միզուկատապի միակ անփոփոխ ախտանիշը՝ զամբուկից արտազրուկն է, վորի մեջ հայտարերվում են գրնոկոկներ: Լեյկոցիտների քանակը ար-

ուագատման մեջ կախում ունի միզուկատապի ընթացքի սրությունից: գոնոկոկների քանակն առանձին գեր չի խաղում: Կարեկոր և վոչ թե գոնոկոկների քանակը, այլ արտազատման մեջ նրանց հայտարերման վաստակ:

Գոնորեյական միզուկատապի ԱկցՈՐՈՇՈՒԽԸ չպետք է գնել միայն հիվանդի գանգատների և արտազատման ու յերկրաժակացին փորձը հասարակ աչքով զննելու հիման վրա, վորովհետեւ միզուկի յուրաքանչյուր բորբոքում, անկախ առաջ բերող ետիոլոգիկ մամենտից, միենույն ախտանիշներն ետալիս, իսկ ախտորոշումը և բուժումը բնականարար տարրերվում են միմյանցից: Ախտորոշումը պետք է լինի հիմնված արտազատման մանրազիտական հետազոտության վրա:

Գոնոկոկների առկայությունը միշտ ել ապացույց է, վոր հիվանդությունը սպեցիֆիկ բնույթ ունի: Գոնոկոկների բացակայությունը վոչ միշտ է բացատրվում հիվանդությունը բուժման փուլումն է զանգում կամ խրոնիկ է: Նման զեպքերում ախտորոշումը զնում են հիվանդության կլինիկական ընթացքի և անամնեսի այլ տվյալների համեմատության հիման վրա: Յերբ արտազատման մեջ այլ մանրեները բացակայում են (ամուլ թարախ), կնշանակի վարակը թաք և կացել. այդ բացատրվում է գոնոկոկների տոկսինի յուրահատուկ ընդունակությամբ՝ կանգնեցնել այլ մանրեների աճը: Վորոկոկների պարբերական և առանց պատճառի բոնկումները նույնապես նշան են այն բանի, վոր գոնոկոկի վարակը թաք և կացած: Գոնոկոկների հայտարերման համար մի շարք զեպքերում կարիք է լինում դիմելու պրովիկացիայի մեթոդին:

Ընթեանուր բուժում: Գոնորեյական միզուկատապի սուրշանում հակացուցված են անսովոր ֆիզիկական լարվածությունն ու ամեն աեսակ ուժեղ շարժումները: Նույնը և վերաբերում է սեռուական զրգումներին: Բորբոքային պրոցեսի արածումը կանխելու համար պետք է նշանակել փոշտը պահելու համար սուսպենզորիում (տ. սասրե), վորն առանձնապես պինդ չպետք է կապել, վորպեսզի միզուկի արտադրությունը սուսպենզորիումի սեղմելուց կանգ չառնի և վորպեսզի զրա հետեանքով միզուկի փոշտային անկյունումներս փուանք չզայանա: Միզուկի բացվածքից հոսող թարախը գրավում է հիվանդների ուշագրությունը և նրանք սովորաբար սեղմելով անդամի սասրեին մակերեսը՝ ջանք են գործ զնում դուրս բերել այն: Այդ զորագությունը մզկում է լորձաթաղանթի գեղ-

ձերի մեջ և հիվանդներին պետք է նախորդը զգուշացնել դրա մասին: Անհրաժեշտ և հոգ տանել առնու զլսիկի մտախն, վոր ծիրակատապ չղարգանա: Գետք և ամեն որ զլսիկը լվանալ տաք ջրով ու սաղոնով և միզուկի անցքին փոքրիկ կտոր խոնավածուծ բամբակ դնել: Ամեն անգամ թացանալիս այդ բամբակը պետք է փոխել:

Սպիտակեղենի վրա թարախ չպետք է լինի: Առնին փաթաթելը կամ ռետինի զանազան տեսակ պարկեր հագնելը միայն վնաս կարող է բերել: Անհրաժեշտ և նախազգուշացնել հիվանդին աչքի շաղկապենուն թարախի փոխադրումից առաջացող վտանգի մասին: Հնարավոր և շաղկապենու զոնորեյական բորբոքում: Յուրաքանչյուր միզումից հետո հիվանդը պետք է լվանա իր ձեռքերը սապոնով և ջրով: Ճեռքերը լվանալը բորբոքին բավական են նրանց վրա ընկած վոչ կայուն՝ զոնոկոկներին անվաս դարձնելու համար:

Տաք վաննաներն ու բազնիքը վնասակար չեն: Դրանք իրոք կարող են սուր կերպարանք տալ հիվանդությանը. հոսումը և անձնական յերեվույթները կսաստկանան, ուստի գրանց մասին ել պետք և հիվանդին նախազգուշացնել: Այդ պատճառով հիվանդության շատ սուր շրջանում պետք է խուսափել դրանցից: Խրոնիկ շրջանում հիվանդության նման սաստկացումը գուցե և ոդտակար լինի, փորովնեան այդպիսի արհեստական սաստկացումն արագացնում է խրոնիկ բորբոքման ընթացքը: Գիշերային ցավուն երեկցիաները վերացնելու համար պետք է սառ թրջոց դնել առնու վրա, սակայն այդ սառ թրջոցները կարող են յերկարացնել բորբոքային պրոցեսի ընթացքը, ուստի պետք է խորհուրդ տալ նման թրջոցները կիրառել միայն խիստ ցավունության զեպքում: Երիկցիաներից խուսափելու համար հիվանդներին խորհուրդ տալ գիշերը տաք չծածկվել, շատ խմիչք չզործածել, երասիկ զրականությունից և զրույցներից խուսափել: Դեղով բժշկելու համար բրուժ պետք է նշանակել ընդունելու (sol.natr. bromati 10%) զիշերը մեկ հացի զդալ ընդունելու, կամ երեկցիաների վոզնուղեղային կենարունների վրա ճնշիչ ներփառծություն ունեցող բրումային կամֆորա և լուպուլին (յերկուոր միասին 0,3-ական զրամ, զիշերը մեկ փոշի): Սակայն այդ զերջին զեղերը պետք է զգուշությամբ նշանակել, վորպեսի խուսափենք սեռական զործունեյության հետագա թուլացումից:

Հիվանդներին խորհուրդ ե արքում խմելիք շատ զործածել (որական 8—10 բաժակ), առատ խմելիքը բարձրացնելով մեզի քանակը

նպաստում է բորբոքված միզուկը զրգող մեզի ջրիկացմանը և մինչույն ժամանակ մեծ քանակով զուրս հոսող հեղուկի սպառ-թյամբ միզուկից թարախը մեխանիկորեն ավելի շատ և հեռացվում: ուտելիքի մեջ պետք է խուսափել կծու և բարկ նյութերից (պղպեղ, քայլախ, մանանեխ, ապուխտած խորտիկներ): Ալկոհոլի վնասը սուր դոնորեցա ունեցող հիվանդների համար խիստ չափազացրած է, գինի շատ խմելը վնասակար է, վորովհետև թուլացնում է որդանիքմբ, սակավ և չափավոր գործածելը վնաս տալ չի կարող: զարեցուրն անպայման վնասակար է, վորովհետև նրա մեջ պարունակվող գայլուկը միզուկի լորձաթաղանթի վրա զրգուչ ներգործություն և ունենում:

Բալզամիկ նյութեր: Գոնորեյական միզուկատապի ընդհանուր քուժման համար կարելի յե ընդունել եփիրային բալզամիկ յուղեր: Այդ յուղերը թեպետ և մանրեսապան ներգործություն չունեն, բայց ընդունակ են բարձրացնել որգանիզմի գիմադրականությունը հանդեպ զոնոկուկի: Միզուկի լորձաթաղանթի վրա, տեղականորեն, մածուցիկ ու ցավ կարող ներգործություն են ունենում և այդպիսով պակասեցնում են բորբոքային բուռն յերեկույթները: Այդ նյութերի բուժիչ արժեքն ընդհանրապես մեծ չե և այդպիսիք նշանակելու ցուցմունքները հետեւյալն են. 1) բորբոքային սուր յերեկույթներ, 2) յերբ հիվանդը չի կարող բուժման մի այլ ձև կիրառել: Դրանց կիրառումը չպետք է ի չարը զործ դնել և պետք է պարբերաբար հետազոտել մեզը սպիտի վերաբերյալ՝ հիշեցիվ, վոր գրանք կարող են զրգուել յերիկամի եպիթելը: Ամենից շատ զործածական են կոպայան բալզամը, կավակավան, սանտալի յուղը 15—20-ական կաթիլ, վորն ընդունել ուտելուց հետո որական 2—3 անգամ: Սուր զոնորեյի ժամանակ սալու և ուրոտրոպին չպետք է նշանակել, վորովհետև ֆենորն ու ֆորմալինն աննշան կոնցենտրացիայով են անցնում մեզին և այդ պատճառով ել միզուկի թաղանթի վրա վոչ մի մանրեսապան ներգործություն չեն ունենում:

Տեղական բուժման նպատակն է զեղի անմիջական մանրեսապան ներգործությունը զոնոկուկների վրա: Գոնոկուկները շատ շուտ լորձաթաղանթի տակի հյուսվածքին են անցնում և այդ հանդամանքը խիստ զժվարացնում և դայքարը նրանց զեմ:

Հակասեպտիկ մերսդ: Ներկայումս մենք այնպիսի դեղանյութ չունենք, վորը կարողանար մանրեսապան ներգործություն ունե-

հալ հյուսվածքների խորքը՝ մտած գոնոկոկների վրա։ Գոնորեյտական միզուկատապի բուժման դասական ճարը՝ արծաթն և (լյապիսը), վորը գեռ արարներն եյին գործածում։ Արծաթի (լյապիսի) պակասությունն այն է, վոր նստեցնում է սպիտակները և վառ է գոյացնում, իսկ այդ փառն արգելում է գոնոկոկների և նրանց իենապօրծունեյության արգյունքների բնական ձևով դուրս յելնելը լորձաթաղանթի խոր խավերից դեպի մակերես։ Այդ պակասությունը չունեն արծաթի սպիտակին պատրաստուկները (պրոտարգոլը, այլբարգինը և այլն)։ Սակայն այդ պատրաստուկների լուծույթները, գոնոկոկների հետ համեմատած, հյուսվածքի խորքը շատ աննշան չափով են թափանցում։ Այդպիսով արծաթի մանրեասպան անմիջական ներգործությունը մինիմումի յև հասնում։

Գոնորեյտական միզուկատապի բուժման ամենատարածված ձևը մոտ անցյալում այն էր, վոր հիվանդի ձեռքն ելին տալիս սրսկիշը և այս կամ այն զեղը խողովակի միջ սրսկելու համար (պրոտարգոլ, լյապիս, սուլեմա)։ Յենթագրում եյին, վոր միզուկի մեջ մացրած հեղուկը գոնոկոկներին կապանի և դրանով հիվանդությունը կանճետանա։ Դա գոնորեյի հակառեպտիկ բուժման շրջանն էր և հապես ճիշտ սկզբունքի վրա յեր հիմնված։ Սակայն բուժման այդ մեթոդը կիրառելիս հաշվի չեր առնվազաւ, վոր զանոկոկները լորձաթաղանթի վրա ընկնելուց 24 ժամ հետո ներթափանցում են լորձաթաղանթի խոր խավերը, իսկ գոնոկոկի վրա ներգործության համար կիրառվելիք հակառեպտիկ միջոցներն այնքան արագ և այնքան խոր չեն թափանցում։ Գոնորեյի բուժման համար միզուկի մեջ բակտերիֆաներ սպանող ախտահանիչ լուծույթների սրսկումից այն արգյունքն էր ստացվում, վոր սովորաբար արտապատումը շատ շուտ պակասում էր և յերբեմն նույնիսկ բոլորովին անհետանում։ Լորձաթաղանթի մակերեսի վրա գանգող գոնոկոկները սպանվում են և լորձաթաղանթի թարախոտվող մակերեսն ապաբինում է։ Իսկ այն գոնոկոկները, վորոնք արգեն ներթափանցել են հյուսվածքների խորքը, գուրու դալու յելք չգանելով՝ շարունակում են այնտեղ զարգանալ և բավական է, վոր սեռական որգանների արյունը մի փոքր շատանա գինի գործածելու հետեանքով, կամ լորձաթաղանթն աննշան չափով կամ անուական գործողության կամ հենց զրգուման հետեանքով, և հիվանդության լիակատար պատկերը նորից կերեա։

Գոնորեյտական միզուկատապի բուժման մեթոդը միզուկի մեջ արծաթի սպիտակին բաղադրություններ սրսկելով սրսկումիջ միջուկի

վոր վոչ միայն բարորմին անոգուա ե, այլ և հիվանդի համար թասաւկար է։ Դա ճնության մնացորդ է, վիտականորեն հիմնավորված չե, և այդ ձեւը վոչ միայն պետք է թողնել, այլ և պետք է մոռացության տալ, ինչպես մոռացել ենք առանց քնացնելու ովկերացիա կատարելը։ Գոնոկոկների վրա անմիջականորեն ներգործելու նպատակով միզուկի միջ հակառեպտիկ նյութեր սրսկելն այն ժամանակ միայն կարելի յեւ առաջարկել, յերբ մենք այնպիսի մանրեասպան պատրաստուկ կունենանք, վորն ընդունակ կլինի թափանցել լորձաթաղանթի տակ նույնքան խոր, վորքան գոնորեկոկները։

Անեպիկ մեթոդ։ Ներկայումս գոնորեյտական միզուկատապի բուժման մի այլ մեթոդ է լայն չափերով տարածված—ասեպտիկ մեթոդը։ Վերջինիս սկզբունքն այն է, վոր գոնոկոկներին չի սպանում, այլ ախտահար հյուսվածքներում գոնոկոկների զարգացման համար անբարենպաստ պայմաններ ե ստեղծում։

Դիտելով գոնորեյտական միզուկատապը վորպես թարախոս վերք, պետք է և զա բժշկներ վերքերի բուժման սովորական խիբուրքի ակադեմիան համաձայն։ Ծնորհիվ անառողմիական յուրահատուկ այն պայմանների, վոր ունի հաստ ֆիբրոզ պատիճով շրջապատված միզուկը և շնորհիվ այն հանգամանքի, վոր հարավոր չե կիրառել վերքի բաց բուժումը (վերքի ճեղքումը), այսուեղ պետք է կիրառել այսպես կոչված «մեծ լվացումներ», այսինքն միզուկին առատորեն վողողել պերմանգանատ կալիումի լուծույթով։ Վերջինս գոնոկոկների վրա բակտերիֆասպան ներգործություն ամենահին չունի, բայց լորձաթաղանթի սերով այտուց և անաջացնում։

Լվացումների ազգեցությունը կայանում է նրանում, վոր առաջին՝ միզուկի բորբոքված լորձաթաղանթի մակերեսից պաթաւողիկ թարախային զատուցքը մեխանիկորեն լվացվում է և այդպիսով հեռացվում են զոնոկոկներն ու նրանց տոկոսները։ յերկրորդ՝ հյուսվածքների խորքից զեպի լորձաթաղանթի մակերեսն արյան շիճուկի հոսանք և սարգում (սերով այտուց), վորը թե գոնոկոկներին և զուրու բերում և թե մանրեասպան ներգործություն և ունենում։

Ուժեղ կոնցենտրացիայի լուծույթներ գործածելու գելքում միզուկի այտուցը կարող է այնքան սաստիկ լինել վոր միզուկը ժամանակավորապես դժվարանում է։ Պերմանգանատ կալիումի

հագեցրած լուծույթները՝ գործնում են սերող այտուց առաջացնող ընդունակությունը և լորձաթաղանթի վրա մեռուկացնող ներգործություն են ունենում: Ուստի լվացումների ծանրության կենտրոնը վոչ թե ներս մուծվող լուծույթի կոնցենտրացիայի, այլ նրա քանակի մեջն ե: Սովորաբար կիրառվում ե պերմանդանատ կալիումի լուծույթը մեկն առ հինգ հազար (1:5.000) կոնցենտրացիայով:

Լվացումները պետք ե մարմնի շերմությանը լինեն, վարսվական սառ լվացումները միզափամփուշտի սեղմանի սանդանք են առաջացնում, իսկ թեժ լուծույթները ցալցնում են և իրենց շերմության կարձատեներործության պատճառով, տաք լուծույթների հետ համեմատած, վոչ մի առավելություն չունեն: Լվացումների մեթոդն առաջարկող ժաման հանձնարարում և լվացումներն որական 2—3 անգամ կատարել: Սակայն բազմաթիվ գիտողությունները ցույց են տվել, վոր բարորովին բավական ե կատարել լվացումներն որական մեկ անգամ:

Ժամեյի մեթոդը: Միզուկի մեջ լցնել հեղուկը եռմարիյան անոթից, վորը կախ և տված միզուկից մեկ մետր բարձրության վրա: Հեղուկի ճնշումը կանոնավորվում է անոթը բարձրացնելով կամ իջեցնելով: Լվացումից առաջ պետք ե առնու զլիխիքը, թիւփի պարկը լվանալ մինչնույն լուծույթով, վորպեսզի մեխանիկության հեռացվեն այն գոնոկուլիները, վորոնք կարող են այդտեղ զարգանալ: Լվացման համար գործածվող ծայրը պետք ե ամուր կզած լինի միզուկի բացվածքին, իսկ հեղուկի հոսանքը պետք ե ընթառա անգամի յերկար առանցքին զուգահեռ: Լորձաթաղանթի ծալերը բացելու համար հեղուկի վորոշ ճնշում ե ապետք: Մանկապուլացիաների յեռանդունության նկատմամբ պետք ե զեկափարզիլ հիվանդի զգացումներսկ: Միզուկի մեջ վրվածություն, անհարժարություն զգալը ցույց ե տալիս, վոր միզուկը հարթված է: Լվացումների ժամանակ հիվանդը ցավ չպետք ե զգա:

Սկզբում փոքր չափերով են լվանում խոզովակի առաջին մասը: Ապա ստիպում են հիվանդին թուլացնել միզապարկի սեղփուշտը լցնել 200—300 խոր. սանաբիմետր հեղուկ, մինչև վոր և անել հիվանդի կանգնած զրությամբ, վորովետե այդ զիրքում սեղմանն ափելի հեշտ և տեղի տալիս և նրա համար ափելի բնական և այդ զիրքում բացվելը: Յերբեմ հեղուկը միզուկը մի-


զափամփուշտի մեջ չի լցվում սեղմանի սանդանքային կծկման պատճառով, կամ այն պատճառով, վոր հիվանդն անկարող ե թուլացնել սեղմանը: Նման զեկությունը պետք ե մի փոքր սպասել՝ առանց հեռացնելու ազակի ծայրը միզուկի արտաքին բացվածքից: Մեղմանը հետզհետե տեղի յե տալիս հեղուկի ճնշմանը և հեղուկը հեղտ կերպով անցնում և միզափամփուշտի մեջ:

Յերբ սեղմանն այնուամենայնիվ բաց չի թողնում հեղուկը, սա պետք ե միզափամփուշտի մեջ լցնել մեծ (150 գ. նոց) սրսկիչի ոգնությամբ (նկ. 1). այդ սրսկիչով կարելի յե ավելի մեծ ճնշում գործել: Հիվանդին պետք ե կանդնած դրությունից պատկածի փոխադրել, վորովետը պատկածի աշխատելն ավելի հարմար ե լինում:

Լվացումից առաջ հիվանդն անպատճառ պետք ե միզի, վորպեսզի միզուկից հեռացնի թարախը. կատարած լվացումից հետո հիվանդը պետք ե գուրսոթափի միզափամփուշտը լցրած հեղուկը, վորպեսզի վերջինս հետ գալիս նորից մաքրի միզուկը:

